«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի

նախագահի առաջին տեղակալ

Ս.Լպուտյան

«06» «մարտի» 2023թ.

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն

Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Ծաչենկո 34, ք. Երևան, ՀՀ) ս/թ. մարտի 23-ից ապրիլի 02-ը:

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

ա) մինչև 8 տարեկան (2014 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

բ) մինչև 10 տարեկան (2012 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

գ) մինչև 12 տարեկան (2010 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

դ) մինչև 14 տարեկան (2008 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

ե) մինչև 16 տարեկան (2006 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

զ) մինչև 18 տարեկան (2004 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) պատանիներ

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: զ (մինչև 18 տարեկան պատանիներ) մրցաշարը, մասնակիցների քիչ քանակի դեպքում, հնարավոր է անցկացնել նաև շվեյցարական 7 խաղափուլով կամ շրջանային մրցակարգով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն ըստ.

1. հատված Բուխհոլց - 1 ցուցանիշի
2. գումարային Բուխհոլցի ցուցանիշի
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
4. հաղթանակների առավելագույն քանակի

**Ժամակարգը՝** յուրաքանչյուր մասնակցի տրվում է 90-ական րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

***Հայաստանի առաջնության ուղեգրեր:*** Հայաստանի պատանիների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

| | **Մինչև 8** | **Մինչև 10** | **Մինչև 12** | **Մինչև 14** | **Մինչև 16** | **Մինչև 18** |
|---|---|---|---|---|---|---|
| **Պատանիներ** | 10 | 12 | 10 | 7 | 6 | 5 |

| | |
|---|---|
| Բացման արարողություն | 25 մարտի, 11:30 |
| 1-ին խաղափուլ | 25 մարտի, 12:00 |
| 2-րդ խաղափուլ | 26 մարտի, 11:00 |
| 3-րդ խաղափուլ | 27 մարտի, 11:00 |
| 4-րդ խաղափուլ | 28 մարտի, 11:00 |
| 5-րդ խաղափուլ | 29 մարտի, 11:00 |
| 6-րդ խաղափուլ | 30 մարտի, 11:00 |
| 7-րդ խաղափուլ | 31 մարտի, 11:00 |
| 8-րդ խաղափուլ | 01 ապրիլի, 11:00 |
| 9-րդ խաղափուլ | 02 ապրիլի, 11:00 |
| Փակման արարողություն | 02 ապրիլի, 17:00 |

- Խաղասկզբից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և սմարթ ժամացույցներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն:
- Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մասնակիցների և նրանց մարզիչների ծախսերը (ճանապարհածախս, հյուրանոց, օրապահիկ) հոգում է գործուղող կազմակերպությունը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 15-ը: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 043 44 84 73 հեռախոսահամարով:

Մրցաշարի գլխավոր մրցավար՝

ՄՄ Անուշավան Առաքելյան